# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*26-ը դեկտեմբերի 2016թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

***N 1 - Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, 2017թ.-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/3 և <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 32/5 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի եկամտային մասի առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:
2. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
3. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 3-ի:
4. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:
5. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին, համաձայն հատված 5-ի:
6. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի առաջարկությանը, համաձայն բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
7. <Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

/հազ. դրամ/

| | *Վարչական բյուջե* | *Ֆոնդային բյուջե* | *Ընդամենը* |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 482820.6 | 0 | 482820.6 |
| Ծախսային մաս | 482820.6 | 6000.0 | 488820.6 |
| Դեֆիցիտ | 0 | -6000.0 | -6000.0 |
| Պահուստային ֆոնդ | 25000.0 | 0 | 25000.0 |

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

***ԿՈՂՄ - 12*** ***ԴԵՄ - 0*** ***ՁԵՌՆՊԱՀ - 0***

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*26-ը դեկտեմբերի 2016թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՄԱՐՅԱՆ/*

***N 2 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի N107 դրական եզրակացությունը՝ Աշտարակ քաղաքի 02-001-0462-0019 ծածկագրից 0,2994հա և 02-001-0105-0006 ծածկագրով 0,3874հա բնակավայրերի նշանակության այլ հողամասերի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի և 02-001-0462-0018 ծածկագրից 0,1895հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության այլ հողամասի փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման հավելվածի 72-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8/1 կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հաստատել Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխությունը և 02-001-0462-0019 ծածկագրից 0,2994հա և 02-001-0105-0006 ծածկագրով 0,3874հա բնակավայրերի նշանակության այլ հողամասերի նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասերի, իսկ 02-001-0462-0018 ծածկագրից 0,1895հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես բնակավայրերի նշանակության այլ հողամաս:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 12* *ԴԵՄ - 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*26-ը դեկտեմբերի 2016թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2016Թ.-Ի ՀՄ. 8-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

*<u>N 3 - Ա ՈՐՈՇՈՒՄ</u>*

*Հիմք ընդունելով Արտաշ Թումանյանի դիմումը, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ, <Հողի հարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Աշտարակ համայնքի ավագանու 13.12.2016թ.-ի հմ. 8-Ա որոշման մեջ

- Արտաշ Թումանյանին տրամադրված գույքահարկի հարկային արտոնությունը փոխարինել հողի հարկի արտոնություն բառերով:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

***ԿՈՂՄ - 12*** ***ԴԵՄ - 0*** ***ՁԵՌՆՊԱՀ - 0***

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*26-ը դեկտեմբերի 2016թ.*

## ՀՐԱՉՅԱ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ, ՄԵՐԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ, ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, ՌԱԶՄԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ,ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, ՍԱՄՎԵԼ ՔԱԼԱՇՅԱՆԻՆ,ՎՈԼՈԴՅԱ ՔԱԼԱՇՅԱՆԻՆ ԵՎ ԶԱՐԶԱՆԴ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/*

***N 4 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Հրաչյա Սիմոնյանի, Մերի Բեգլարյանի, Տիգրան Խաչատրյանի, Ռազմիկ Տերտերյանի, Արտաշես Խաչատրյանի, Արսեն Խաչատրյանի, Սամվել Քալաշյանի, Վոլոդյա Քալաշյանի և Զարզանդ Ալեքսանյանի դիմումները, ղեկավարվելով «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

- Զարզանդ Ալեքսանյանին տալ գույքահարկի գծով հարկային արտոնություն՝ 82 000 ՀՀ դրամի չափով
- Հրաչյա Սիմոնյանին տալ գույքահարկի գծով հարկային արտոնություն՝ 50 000 ՀՀ դրամի չափով
- Մերի Բեգլարյանին տալ հողի հարկի գծով հարկային արտոնություն՝ 60 106 ՀՀ դրամի չափով
- Տիգրան Խաչատրյանին տալ հողի հարկի գծով հարկային արտոնություն՝ 40487 ՀՀ դրամի չափով և գույքահարկի գծով հարկային արտոնություն՝ 26 500 ՀՀ դրամի չափով
- Ռազմիկ Տերտերյանին տալ հողի գծով հարկային արտոնություն՝ 21 303 ՀՀ դրամի չափով
- Արտաշես Խաչատրյանին տալ հողի գծով հարկային արտոնություն՝ 33 371 ՀՀ դրամի չափով
- Արսեն Խաչատրյանին տալ հողի գծով հարկային արտոնություն՝ 149 553 ՀՀ դրամի չափով
- Վոլոդյա Քալաշյանին տալ հողի գծով հարկային արտոնություն՝ 6 032 ՀՀ դրամի չափով
- Սամվել Քալաշյանին տալ հողի գծով հարկային արտոնություն՝ 12 500 ՀՀ դրամի չափով

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

***ԿՈՂՄ - 11*** ***ԴԵՄ - 0*** ***ՁԵՌՆՊԱՀ - 0***

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | |

*Քվեարկությանը չի մասնակցել Ա. Խաչատրյանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն